ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 7

06 մարտի 2020թվական գյուղ Նոր Կյանք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանքի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանքի համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 6-ի թիվ 2 նիստի հետևյալ օրակարգը:

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի ԹԻՎ 15-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(զեկուցող՝Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանք համայնքի ղեկավար՝ Արա Սուքիասյան)
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ 08-087-0049- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.04968 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(զեկուցող՝Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանք համայնքի ղեկավար՝ Արա Սուքիասյան)
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 35-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(զեկուցող՝Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանք համայնքի ղեկավար՝ Արա Սուքիասյան)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	կողմ՝ 5	դեմ՝0	ձեռնպահ՝ 0
ՅՈՒՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ՝	կողմ ----------	----------	----------

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ՝ կողմ ---------- ---------- ----------

ԺՈՐԱ ԹՈՐՈՍՅԱՆ՝ կողմ ---------- ---------- ----------

ՄԱՆՎԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ՝ կողմ ---------- ---------- ----------

ԱՐՏԵՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ կողմ ---------- ---------- ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

06 մարտի 2020թվական,

գյուղ Նոր Կյանք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ N 8 - Ն

<<06>> մարտի 2020թվական գյուղ Նոր Կյանք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի ԹԻՎ 15-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով և հաշվի առնելով, որ սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանք համայնքի սեփականությանը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտ հողատեսքի և գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամասերի օտարումը բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 23[1]-րդ կետի 2րդ պարբերությամբ սահմանված պահանջները (հողամասերը շրջապատված են քաղաքացիների սեփականություն հանդիսացող հողամասերով), Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանք համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանք համայնքի սեփականությանը հանդիսացող սույն որոշման հավելվածում նշված հողամասերն օտարել աճուրդով:

2. Հաստատել աճուրդով օտարվող հողամասերի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանք համայնքի ավագանու 2019թվականի հունիսի 14-ի « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանք համայնքի սեփականությունը հանդիսացող հողերից աճուրդով հողամաս օտարելու, օտարման մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու մասին» թիվ 15-Ն որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

		Կողմ՝ 5	Դեմ՝ 0	Ձեռնպահ՝ 0
ՅՈՒՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ՝	կողմ	----------	----------	----------
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ՝	կողմ	----------	----------	----------
ԺՈՐԱ ԹՈՐՈՍՅԱՆ՝	կողմ	----------	----------	----------

ՄԱՆՎԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ՝ կողմ ---------- ---------- ----------

ԱՐՏԵՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ կողմ ---------- ---------- ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

<< 06 >> մարտի 2020 թվական
գյուղ Նոր Կյանք

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Նոր Կյանք համայնքի ավագանու 2020 թվականի
Մարտի 6 -ի թիվ 8 -Ն որոշման

Աճուրդով օտարվող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանք համայնքի սեփականությանը համարվող հողամասերի մեկնարկային գներն ու պայմանները

N	Հողամասի գտնվելու վայրը, հասցեն	Հողամասի ծածկագիրը, իրավունքների պետական գրանցման վկայական N	Հողամասի մակերեսը (հեկտար)	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը)	Հողի որակական հատկանիշը		Օտարման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը	Օտարման եղանակը	Տվյալ հողամասի մեկ հեկտարի կադաստրային արժեքը (դրամ)	Հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը՝ կադաստրային արժեքի նկատմամբ (%)	Տվյալ հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը (դրամ)	Աճուրդի նախավճարի չափը՝ մեկնարկային գնի նկատմամբ (%)	Գնային առաջարկի նվազագույն չափը մեկնարկային գնի նկատմամբ (%)
						Հողի կարգը	Ջրովի, անջրդի								
1.	ՀՀ Շիրակի մարզ, համայնք Նոր Կյանք , հողամաս	08-087-0118-0013, 05062019-08-0020	0.2003	Գյուղատնտեսական	Արոտ	1V	Անջրդի	Գյուղատնտեսական գործունեություն (անասունների արածեցում)	չկան	Փակ աճուրդ	267500	100	53580,25	5	5
1.	ՀՀ Շիրակի մարզ, համայնք Նոր Կյանք , հողամաս	08-087-0052-0021, 21022020-08-0013	0.014	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	Գյուղատնտեսական արտադրական օբյեկտ	1V	Անջրդի	Արտադրական գործունեություն	չկան	Փակ աճուրդ	3420000	100	47880.0	5	5

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ N9-Ա

« 06 » մարտի 2020 թվական գյուղ Նոր Կյանք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ 08-087-0049- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.04968 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի N 186-Ն հրամանով հաստատված «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգի» 9-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթով և հաշվի առնելով, որ համայնքի վարչական սահմաններում 08-087-0049- կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող համայնքապետարանի շենքի (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N 51 որոշման N 7 հավելված) պահպանման ու սպասարկման համար նախատեսված 0.04968 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ գոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր և համայնքի կադաստրային քարտեզագրման ժամանակ թույլ տրված անճշտության հետևանքով այն համայնքին է փոխանցվել որպես «անահայտ» քաղաքացու սեփականություն, անճշտությունը ուղղելու նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանք համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանք համայնքի վարչական սահմաններում 08-087-0049- կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող համայնքապետարանի շենքի պահպանման ու սպասարկման համար նախատեսված 0.04968 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ճանաչել համայնքի սեփականություն:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանք համայնքի ղեկավար Արա Սուքիասյանին.

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի գործառնական նշանակությունը փոխադրել հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակություն:

բ) Սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանում՝ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետական գրանցման ենթարկելու համար:

3. Համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված հողամասի հատակագիծը կցվում է որոշմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

		Կողմ՝ 5	Դեմ՝ 0	Ձեռնպահ՝ 0
ՅՈՒՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ՝	կողմ	----------	----------	----------
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ՝	կողմ	----------	----------	----------
ԺՈՐԱ ԹՈՐՈՍՅԱՆ՝	կողմ	----------	----------	----------
ՄԱՆՎԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ՝	կողմ	----------	----------	----------
ԱՐՏԵՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ՝	կողմ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ**

« 06 » մարտի 2020 թվական
գյուղ Նոր Կյանք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10-Ն

06 մարտի 2020թվական գյուղ Նոր Կյանք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 35-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Նորմատիվ իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 3-րդ մասի , «Տեղական ինքնակառավարման մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանքի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանքի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանքի համայնքի 2020 թվականի բյուջեի հաստատման մասին » թիվ 35-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանք համայնքի 2020թվականի բյուջեի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 11, խումբ 01, դաս 02 .51(ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ)–ի ծախսերի տնտեսագիտական դասակարգման (Պահուստային միջոցներ) 4891 հոդվածից «400000» (չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղափոխել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանքի համայնքի 2020թվականի բյուջեի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 01, խումբ 01, դաս 01.51 (համայնքի ղեկավարի օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում) բաժնի 4241(մասնագիտական ծառայություն) հոդված:

2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանքի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ- ֆինանսիստին՝ կատարել համապատասխան փոփոխությունները օրենքով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ՝5	դեմ ՝0	ձեռնպահ՝ 0
ՅՈՒՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ՝կողմ	----------	----------	----------
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ՝ կողմ	----------	----------	----------
ԺՈՐԱ ԹՈՐՈՍՅԱՆ՝ կողմ	----------	----------	----------
ՄԱՆՎԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ՝ կողմ	----------	----------	----------
ԱՐՏԵՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ՝կողմ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

06 մարտի 2020թվական
գյուղ Նոր Կյանք